ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2025 թվականի N 732-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 8-Ի N 569-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի N 1176-Լ որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» N 569-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 4-րդ կետում «հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից» բառերը փոխարինել «2025 թվականի հունիսի 6-ից» բառերով.

2) որոշման հավելվածի՝

ա. 5-րդ կետում «Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող ամսվա 1-ից» բառերը փոխարինել «2025 թվականի հունիսի 6-ից» բառերով,

բ. 16-րդ կետում և N 1 ձևի 2.2-րդ կետում «Եթե խոշոր եղջերավոր կենդանին սպանդանոց տեղափոխող անձը չի համարվում խոշոր եղջերավոր կենդանու սեփականատերը, ապա տեղափոխող անձն իրեն հանձնված խոշոր եղջերավոր կենդանու մսեղիքը և ենթամթերքը փոխանցում է խոշոր եղջերավոր կենդանու սեփականատիրոջը։» բառերը հանել,

գ. 19-րդ կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

դ. N 4 ձևում «՝ սեփականատիրոջը փոխանցելու նպատակով (ընդգծել այն հատվածը, որին համապատասխանում է հայտարարատուն)» բառերը հանել։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

06.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ